

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՐԱՉՅԱ ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՐՄԻՆԵ ԱՐԱՄԱՅԻՍԻ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

ԴԱՐՁՎԱԾԱՅԻՆ ՀՈՄԱՆԻՇՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Ժ.02.01- «Հայոց լեզու» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների
թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2014

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝

բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր Ս. Ա. Գալստյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր Յու. Ս. Ավետիսյան

բանասիրական գիտությունների
թեկնածու, դոցենտ Ա. Վ. Գալստյան

Առաջատար կազմակերպություն՝

Վանաձորի Հ. Թումանյանի անվան
պետական մանկավարժական
ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կկայանա 2014 թ. հունիսի 30-ին՝ ժամը 15:00-ին, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում գործող ԲՈՂ-ի Լեզվաբանության 019 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ Երևան, 0015, Գրիգոր Լուսավորչի 15:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2014թ. մայիսի 29-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, բանասիրական
գիտությունների թեկնածու, դոցենտ՝

Ն.Մ. Սիմոնյան

Թեմայի արդիականությունը: Յուրաքանչյուր լեզու շարժում ու փոփոխական համակարգ է: Այս հատկանիշները լեզվի զարգացման ու հարստացման նախապայման են: Այդ հարստությունը դրսևորող լեզվական երևույթներից է հոմանշությունը, որի շնորհիվ խոսքը դառնում է առավել արտահայտիչ, գեղեցիկ և պատկերավոր: Հայերենը հարուստ է հոմանիշներով, այդ թվում՝ դարձվածային, որոնք արտահայտում են առարկաների ու երևույթների անվանումների իմաստային տարբեր նրբերանգներ:

Ատենախոսության թեմայի ընտրությունը պայմանավորված է հայերենում դարձվածային հոմանիշների պակաս ուսումնասիրված լինելով: Մեզանում մանրամասնորեն ուսումնասիրվել են հոմանշությանն ու դարձվածաբանությանն առնչվող զանազան հարցեր, սակայն ժամանակակից հայերենում դարձվածային հոմանշության վերաբերյալ լայնածավալ ուսումնասիրություն չի կատարվել: Սրանով էլ պայմանավորված է աշխատանքի արդիականությունը:

Ատենախոսության նպատակը և խնդիրները: Ատենախոսության հիմնական նպատակն է համակարգված և հնարավորինս ամբողջական ներկայացնել ժամանակակից հայերենի դարձվածային հոմանիշների առանձնահատկությունները: Այս նպատակն իրագործելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

ա) ներկայացնել դարձվածային հոմանիշների կառուցվածքային տիպերը, հատորդակցական և անվանողական դարձվածային հոմանիշները,

բ) առանձնացնել միևնույն դարձվածային միավորի (այսուհետ՝ ԴՄ) արտահայտած տարբեր իմաստներով կազմված հոմանշային տարբեր շարքերը,

գ) բացահայտել համաբաղադրիչ (նույն կամ ընդհանուր բաղադրիչ ունեցող) հոմանիշ ԴՄ-ների առանձնահատկությունները,

դ) ուսումնասիրել ԴՄ-ների հոմանշությունն ըստ լեզվի պատմական շերտերի, ինչպես նաև արևելահայերեն և արևմտահայերեն ԴՄ-ների հոմանշությունը,

ե) ներկայացնել բառարաններում ընդգրկված արևմտահայերեն (մասամբ՝ արևելահայերեն) ԴՄ-ների առանձնահատկությունները,

զ) քննել ԴՄ-ների ոճական հոմանշությունը,

է) ներկայացնել ԴՄ-ների հոմանշությունն ըստ գործառության ոլորտի, հուզարտահայտչական երանգավորման,

ը) կատարել 1) խոսքի պատկերավորման և արտահայտչական դարձվածային միջոցների, 2) իմաստային, ոճական, իմաստային-ոճական, 3) լեզվական և խոսքային դարձվածային հոմանիշների քննություն,

թ) ներկայացնել դարձվածային նորաբանություններ:

Գիտական նորույթը: Ատենախոսության նորույթը պայմանավորված է աշխատանքի նպատակով և խնդիրներով: Առաջին անգամ փորձ է արվել հանգամանորեն քննել ժամանակակից հայերենի դարձվածային հոմանիշները՝ ըստ կառուցվածքային տեսակների, համաբաղադրիչ (նույն կամ ընդհանուր բաղադրիչ ունեցող) ԴՄ-ների, պատմական շերտերի, աշխարհաբարի գրական երկու տարբերակների, ոճական կիրառությունների, ինչպես նաև ներկայացվել են արևելահայերեն 28 և արևմտահայերեն 12 դարձվածային նորաբանություն:

Ռեսուլտատային փաստական նյութը: Ռեսուլտատային նյութ են դարձել ժամանակակից հայերենի ԴՄ-ները, ինչպես նաև գրաբարի, միջին

հայերենի, արևմտահայերենի, բարբառների և օտար լեզուների այդօրինակ կապակցությունները:

Դիտարկվել են դարձվածաբանական, հոմանշային, բացատրական, թարգմանական և այլ բառարաններում ընդգրկված ԴՄ-ներ և դարձվածային տարբերակներ:

Ատենախոսության մեջ վկայված բնագրային օրինակների սկզբնաղբյուրներն են 20 - 21 դդ. հայ գրականության արձակ և չափածո երկերը, 2011 - 2012 թթ. արևելահայերեն և արևմտահայերեն պարբերական մամուլը, համացանցային կայքէջերը:

Ուսումնասիրության տեսական և գործնական նշանակությունը: Ատենախոսության մեջ դիտարկված տվյալները կարող են նպաստել հոմանշության և դարձվածաբանության տեսության ամբողջացմանը: Աշխատանքը կարող է օգտակար լինել դպրոցական և բուհական ծրագրերում հոմանշություն և դարձվածաբանություն բաժիններն ուսումնասիրելիս, դարձվածաբանական, հոմանշային և թարգմանական բառարանների կազմման աշխատանքներին:

Ուսումնասիրության մեթոդը: Ատենախոսության մեջ առաջ քաշված խնդիրներն իրենց համապատասխան լուծումներն են ստացել համաժամանակյա սկզբունքով:

Նկարագրական հետազոտությունների մեթոդով կատարվել է ա) գիտական փաստերի, իրողությունների նկարագրություն, որոնք օբյեկտիվորեն գոյություն ունեն, բայց դեռևս ուսումնասիրված չեն, բ) փաստական նյութերի վերլուծություն և ընդհանրացում, եզրակացությունների ձևակերպում:

Չափարկային-վերլուծական հետազոտության մեթոդը նպաստել է ճշգրիտ և հավաստի գիտական փաստերի հավաքմանը:

Չամենատական-զուգահեռական մեթոդով կատարվել է ժամանակակից հայերենի ԴՄ-ների և դրանց հոմանշության ուսումնասիրություն՝ ըստ լեզվի զարգացման պատմական շերտերի, աշխարհաբարի գրական երկու տարբերակների, բարբառների, բառարանների:

Խառը տիպի հետազոտությունների մեթոդով բացահայտվել են գիտական նոր, առավել էական փաստեր, երևույթներ և օրինաչափություններ:

Իմաստային դասակարգմամբ մեկնաբանել ենք ԴՄ-ների, ինչպես նաև դարձվածային հոմանիշների իմաստային դաշտերը. անդրադարձել ենք ԴՄ-ների ձևաիմաստային մյուս խմբերին:

Կառուցվածքային վերլուծությամբ ուսումնասիրել ենք ԴՄ-ների, ինչպես նաև դարձվածային հոմանիշների կառուցվածքային-քերականական խմբերը և նրանց հատկանիշները:

Ատենախոսության ծավալը և կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է համակարգչային 147 էջից («Ներածություն», «Առաջին գլուխ», «Երկրորդ գլուխ», «Երրորդ գլուխ», «Եզրակացություններ», «Չամառոտագրություններ», «Օգտագործված գրականության ցանկ»):

Ատենախոսությունը քննարկվել է ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի արդի հայերենի բաժնում և երաշխավորվել է հրապարակային պաշտպանության:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածության մեջ հիմնավորված է ուսումնասիրվող թեմայի կարևորությունը, տրված է հոմանիշների, ԴՄ-ների և դարձվածային հոմանիշների

ըմբռնունը մասնագիտական գրականության մեջ, ներկայացված են լեզվաբանության մեջ դարձվածաբանության տեղի, ԴՄ տերմինի, ԴՄ-ի նեղ կամ լայն ըմբռնման կողմնակիցների կարծիքները: Կատարվում են ընդհանուր եզրահանգումներ:

Առաջին գլխում տրվում է դարձվածային հոմանիշների սահմանունը, ուսումնասիրվում են ԴՄ-ների և դրանց հոմանշության կառուցվածքային տեսակները, ձևաիմաստային մյուս խմբերը (համանուն, հականիշ, հարանուն) և համաբաղադրիչ (նույն կամ ընդհանուր բաղադրիչ ունեցող) ԴՄ-ների և դրանց հոմանշության առանձնահատկությունները:

1. ԴՄ-ՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀՈՄԱՆՇՈՒԹՅՈՒՆ ԸՍՏ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ

Դարձվածային հոմանիշներն ունեն միևնույն չափանիշները, ինչ բառային հոմանիշները:

ժամանակակից հայերենում հոմանիշ են այն ԴՄ-ները, որոնք ունեն նույն կամ մոտ իմաստներ, բայց կարող են տարբերվել ոճական կիրառություններով ու հուզարտահայտչական գունավորումներով (երանգավորումներով) և որոշակի համատեքստերում կարող են փոխարինվել իրարով:

ԴՄ-ները կարող են հոմանշային շարքեր կազմել, եթե ունեն կառուցվածքային ընդհանրություն: Ըստ այդմ՝ **մախադասությամբ հանդես եկող** ԴՄ-ները, որոնք հաճախ տրամաբանական դատողություն են արտահայտում, հոմանշային հարաբերության մեջ են մտնում միմյանց հետ և կազմում առանձին շարքեր (*արևը ամոթից ամպերի տակ է մտնում // երբ դուրս է գալիս, երեսից լույս է ծորում (կաթում) // աչքում լույս (յուղ) կա // երեսին ճաշ կուտալի - գեղեցիկ է*), իսկ հարադրական կառուցվածք ունեցող ԴՄ-ները, որոնք համարժեք են բառին և տրամաբանական հասկացություն են արտահայտում, միմյանց հետ են հոմանշային շարքեր կազմում: **Բառային արժեք ունեցող** դարձվածային հոմանիշները լինում են անվանական (գոյականական, ածականական), բայական, մակբայական և եղանակավորող: Ա. Սուքիասյանը չի բացառում նաև այն փաստը, որ որոշ դեաքերում գոյականը և ածականը կամ ածականը և մակբայը միաժամանակ համապատասխանաբար հանդես են գալիս նաև որպես հոմանիշներ¹:

Փիտական գրականության մեջ ԴՄ-ների դասակարգված կառուցվածքային ձևերից բացի՝ հանդիպում են նաև **թվական+դերանուն** (*երկրորդ «ես»* - մեկին հոգեհարազատ էություն), **ածական+դերանուն** կամ **դերանուն+ածական** (*փոքր ես* - համեստություն. *սեփական ես* -յուրահատուկ ինքնություն. *մեզնից լավերը (մեզնեն աղեկները (արևմտի.))* - սատանա) գոյականական, **դերբայ+դերբայ** (*ընկած-ելած // եկած-ելած // ընկած-սրած* - փորձառու. *թքած-կացրած* - ոչ ամուր. *մեծացած-փոքրացած* - ժամանակից շուտ հասունացած), **դերանուն+դերբայ** (*իր ասածի* - համառ) ածականական, **եղանակավորող բառ+բայ՝ արտահայտված ըրձական եղանակով** (*հենց իմանաս* - կարծես, թվում է) եղանակավորող ԴՄ-ների կաղապարները:

Հայերենը հարուստ է հատկապես բայական, գոյականական, ածականական դարձվածային հոմանիշներով. **բայական** - *աչքերը (աչքը) խփել // աչքը աշխարհի վրա փակել // գլուխը գետին դնել // գրողի ծոցը գնալ (անարգ.) // խնկի հոտի կարոտել (ամենօր) // Աստծու մոտ գնալ // մահկանացուն կնքել // արևը սևանալ (խավարել, մարել) // երկու թիզ հող խնդրել // գետնի տակն անցնել // մեկի թեփը հատնել (բրբ.) // հոգին Աստծուն տալ* և այլն - մեռնել.

¹ Ա. Սուքիասյան, Հոմանիշները ժամանակակից հայերենում, Երևան, 1971, էջ 57:

գոյականական - *խաղողի արյուն // խաղողի ջուր // հիսուսական ջուր // կարմիր ջուր // ծերոց գավազան // ծերունյան կաթ* - զինի. **ածականական** - *աչքի լույս // սրտի մեջ մտած // սրտի կտոր // աչքի սև ու սպիտակը // սրտի հատոր // լույս ու ջուր // աչքի արդար եղ (գվռ.) // սիրասնունը ազիզ (հզվդպ.)* - սիրելի:

Սակավաթիվ են մակբայական և եղանակավորող ԴՄ-ների հոմանշային շարքերը. **մակբայական** - *ամբողջ (հզվդ. լրիվ) ծայնով // այբից (մինչև) ֆե (քե) // մինչև ականջների բլթակները // մինչև ատամները զինված // մինչև (արյան) վերջին կաթիլը // մինչև վարդապետի խազը // մազերից մինչև կրունկները // ոտքով գլխով* - ամբողջովին, ամբողջապես, լիովին, առանց մնացորդի. **եղանակավորող** - *Աստված գիտի // ո՞վ գիտի // ի՞նչ իմանաս* - անհայտ է. *ա՛յ քեզ բան // ա՛յ քեզ օյին // արի ու տես* - զարմանքի արտահայտություն:

Դարձվածային հոմանշային շարքերին հոմանիշ բառը ևս կարող է իր հոմանիշն ունենալ: *Օրինակ՝ վախենալ // երկյուղել // սարսափել // ահաբեկվել-աչքը (աչքերը) վախենալ // արյունը (երակներում) սառչել (պաղել, ցամաքել, արևմտի.՝ ցամքիլ) // թուլը կուլ տալ // լեզուն փորը գցել (արևմտի.՝ քաշել) // լեղին (ջուր) կտր(վ)ել (դառնալ) // լեղին ծաքել (պատռ(վ)ել, տրաքվել) // ձայնը (ծենը) փորը գցել (քաշել) // փորը (փորները) կատու ընկնել (մտնել) // սիրտը դողալ (դողացնել, դողդողալ, դող ընկնել) // սիրտը կտրվել՝ փորն ընկնել // մկան ծակը (բունը) հազար (հարյուր) թումանով (թումանի) առնել (խնդրել, բրբ.՝ պտրտել) // մկան ծակի ման գալ և այլն:*

Միևնույն բազմիմաստ ԴՄ-ը կարող է հոմանշային տարբեր շարքեր կազմել: Ստորև ներկայացված գրաֆիկական օրինակի 4-րդ դաշտում հասվում են մյուս երեք դաշտերի ընդհանուր օրինակները: Դաշտերի քանակը կարող է ավելանալ. արդյունքում ԴՄ-ներին հոմանիշ բառերը կարող են արտահայտել տարբեր և իրար հետ ոչ առնչակից իմաստներ:



2. ԴՄ-ՆԵՐԻ ՉԵՎԱԻՄԱՍՏԱՅԻՆ ՄՅՈՒՄ ԽՄԲԵՐԸ

Ժամանակակից հայոց լեզվի դարձվածային համակարգում, ի տարբերություն հոմանշության, ձևաիմաստային մյուս խմբերի ԴՄ-ները զգալիորեն սակավաթիվ են: Այս խմբերում մեծ է դրոշյալ հոդի դերը:

Ինչպես բառերը, համանուն ՂԱ-ները ձևով նույնն են, իմաստով՝ տարբեր: Օրինակ՝ *1.մագ թոցնել* – հափշտակել և *2.մագ թոցնել* – շատ սուր լինել:

Դետաքրքիր է այն փաստը, որ համանուն ՂԱ-ների իմաստների միջև երբեմն նկատվում է հակառակություն: Օրինակ՝ *1.ծեռքը բռնել* – օգնել և *2. ծեռքը բռնել* – խանգարել:

Գլանաձև ՂԱ-ներն արտահայտում են հակառակ իմաստներ: Օրինակ՝ *ականցը քեթև* - ուշադիր, լավ լսող, պատրաստակամ և *ականցը ծանր* - խուլ, դժվար լսող. *կարմիր լույս վառել* - խոչընդոտել, կասեցնել և *կանաչ լույս վառել*- ազատ գործողության իրավունք տալ, բարենպաստ պայմաններ ստեղծել:

Բառային հարանունների պես հարանուն ՂԱ-ները կառուցվածքով՝ ձևով, և իմաստով մի կողմից առնչվում ու հարաբերակցվում, մյուս կողմից երբեք չեն նույնանում և թե՛ արտահայտությամբ, թե՛ բովանդակությամբ այս կամ այն չափով տարբերվում են իրարից²: Օրինակ՝ *սև կապել* – սգալ և *սևը կապել* – մեռցնել, ոչնչացնել, զրկել. *խելքի ընկնել* – խելքանալ, սթափվել և *խելքին ընկնել* – հետևել (մեկին), համակերպվել:

Կան ՂԱ-ներ, որոնք ձևային տեսակետից թեև հարանուններ են, սակայն իմաստային առումով հակիմաստ են (նման բայական ՂԱ-ների իմաստները կարող են ունենալ սեռային տարբերություն): Օրինակ՝ *ծեռք բռնել* – օգնել, օժանդակել և *ծեռքը բռնել* - արգելել, խանգարել. *գլուխ գալ* – հաջողվել, ստացվել և *գլուխը գալ* - փորձանքի ենթարկվել, պատահել և այլն: Կարծում ենք՝ նման ՂԱ-ները պետք է համարել հականիշներ:

2. ՀԱՄԱԲԱՂԱԴՐԻՉ (ՆՈՒՅՆ ԿԱՍ ԸՆԴՅԱՆՈՒՐ ԲԱՂԱԴՐԻՉ ՈՒՆԵՑՈՂ) ՂԱ-ՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀՈՄԱՆՇՈՒԹՅՈՒՆԸ

Կատարվել է մարդու մարմնի մասեր, գույներ և կենդանիներ անվանող բաղադրիչներով ՂԱ-ների հոմանշության ուսումնասիրություն: Հոմանշությունը դրսևորվում է և՛ համաբաղադրիչ ՂԱ-ներում, և՛ իմաստային նույն ու տարբեր խմբերում: Համաբաղադրիչ ՂԱ-ների հոմանշային շարքերի շատ լինելու հանգամանքը կարելի է բացատրել երեք պատճառով՝ ա) նույն բաղադրիչով կազմված ՂԱ-ների քանակով, բ) ՂԱ-ի բազմիմաստությամբ, գ) կամընտրական բառերով:

Ստմաթիկ նույն բաղադրիչով հոմանշային շարքեր առավելապես կան *սիրտ*, *գլուխ*, *աչք*, *ծեռ(ք)*, *ոտ(ք)*, *լեզու*, *բերան*, *երես*, *քիթ* բաղադրիչներով, որոնք աչքի են ընկնում նաև հոմանշային շարքի բազմանդամությամբ: Օրինակ՝ *սիրտ* – *սիրտը շուռ գալ* // *սիրտը տրոփել* (*խփել*, *նետել*) // *սիրտը այրվել* (*մխալ*) // *սիրտը գնալ* (*ու*) *գալ* // *սիրտը մեկի համար դողալ* // *սիրտը իրար տալ* // *սիրտը հատնել* // *սիրտը ծաքել* (*պատռվել*) // *սիրտը ջուր դառնալ*, *սիրտը կորեկ դառնալ* – անհամգոստանալ. *գլուխ* – *գլուխը թիթեղել* // *գլուխը մածնել* // *գլուխը յուղել* // *գլուխը աղել* (*խսկց.*) (*գլխին աղ անել*) // *մեկի գլուխը տաք գալ* // *գլուխը կլեկել* // *գլուխը քլմստորել* (*թրել*) – խաբել և այլն³:

² Ա. Մարգարյան, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1990, էջ 342:

³ Օրինակները ներկայացված են ըստ Ա. Սուքիասյանի, Ս. Գալստյանի «Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան»-ի (1975), Խ. Բաղիկյանի «Ուսումնական դարձվածաբանական բառարան»-ի (2002), Ա. Սուքիասյանի «Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան»-ի (2003), Պ. Բեդիրյանի «Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան»-ի (2011):

Հոմանիշներ կարող են լինել նաև տարբեր սոմատիկ ԴՄ-ները: Օրինակ՝ աչքերը (աչքը) փակել, բերանը բացել // բերան առնել // բերան բերնի տալ // բերան գալ // բերանը շաղ տալ // բերանը չկանգնել // բերանի կապերը (կապը) քանդել (կտրել) // բերան ցավեցնել // լեզու ածել // լեզու առնել // լեզու բերան չխնայել // լեզու գտնել // մեկի հետ լեզու բաթախել // մեկուհի դեմ լեզու ելլել // լեզու կտր(վ)ել // լեզու հանել // իր լեզուն շարժել // լեզուն պյուլպյուլի պես դառնալ // լեզուն պրունկով անել // լեզուն պտտվել // լեզվին ազատություն տալ // շրթունքները միմյանց խփել և այլն – խոսել:

Նույն երևույթն առկա է կենդանիների անուններով ԴՄ-ներում: Առավել շատ ԴՄ-ներ կազմված են *շուն, էշ, ձի, գայլ, ծուկ, հավ, ճանճ* բաղադրիչներով, որոնց հոմանշային շարքերը հաճախ հարաբերակից են լինում այդ անվանումների փոխաբերական իմաստներին: Օրինակ՝ ծեր աղվես // մորթը դուրս տված աղվես - խորամանկ. Կիպրոսի էշ // էշ արածեցնող // էշ-էշ // էշի գլուխ – հիմար և այլն:

Տարբեր հարաբերություններ, գործողություններ և հատկանիշներ են արտահայտվում իմաստային այս խմբի տարբեր կենդանիների անուններով ԴՄ-ների հոմանշային շարքերում: Օրինակ՝ ծիռ քայլ // ռահվան ծիռ քիմի («պես»)/ / ծագարների պես // ծտի թևով // ծտի պես (նման) – արագ. էշ ներկող // գառան մորթի հագած գայլ // Քրիստոսի հոտի գայլ // օձի (պոչ) կծած – խարդախ, խաբեբա. օձի եղջյուր // օձի լեղի // օձի (արծվի, ծիծեռնակի, ծտի, հավի) կաթ // օձի ձու // սև աղվես // սպիտակ ագռավ – հազվագյուտ բան և այլն:

Իմաստային երրորդ խմբում (գունանուն բաղադրիչով ԴՄ-ներ) հոմանշային շարքերը քիչ են: Օրինակ՝ նույն գունանունով - սևը բերել // սև ու մուրթ տանել – դժբախտացնել. վարդագույն ակնոցով դիտել (նայել) // վարդագույն լույսով վառել – լավատես լինել. տարբեր գունանուններով - կարմիր քարտ ցույց տալ // կանաչ-կարմիրը կապել – պատժել. կարմիր արևից ընկած // կանաչ տրեկից ընկած – վաղամեռիկ:

Իմաստային վերը նշված դաշտերն իրարից «չինական պարիսպ»-ով պատմեչված չեն: Այս դաշտերի միջև կա հոմանշային կապ. արդյունքում շարքը դառնում է ավելի բազմամուս: Օրինակ՝ կաշի երես (դեմք) // կաշի կտրած տրեխի երես // պինդ երես // սև երես // երեսը բրդաջրով լվացած (երեսի բուրդը ջրով լվացած) // երեսը կտրտող // երեսը տավուլի (դավուլի, «դիտլի») կաշի // երեսի կաշին հաստ // ցորեն լեզու // իրուոց վետ (բաց ոտք) // շան երես // ճակատը շան կաշի // շան երես հագած և այլն – անամոթ, աներես, պնդերես:

Երկրորդ գլխում ուսումնասիրվում են ԴՄ-ները և դրանց հոմանշությունն ըստ լեզվի զարգացման պատմական շերտերի, աշխարհաբարի գրական երկու տարբերակների՝ արևելահայերենի և արևմտահայերենի, կատարվում է արևմտահայերեն (մասամբ՝ արևելահայերեն) ԴՄ-ների զուգադրական քննություն ըստ բառարանների:

1. ԴՄ-ՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀՈՄԱՆՇՈՒԹՅՈՒՆ ԸՍՏ ԼԵԶՎԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՇԵՐՏԵՐԻ

Ըստ լեզվի պատմական զարգացման և բառապաշարի շերտաբանական դասակարգման⁴, ընդունված է ժամանակակից հայոց լեզվի *գրաբարյան, մի-*

⁴ Շերտաբանական դասակարգում տերմինը՝ ըստ Ա. Մարգարյանի (ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1993, էջ177):

ջինհայերենյան, բարբառային (գավառական), արևմտահայերենյան և արևելահայերենյան բառաշերտեր: Այս շերտերում իրենց տեղն ու դերն ունեն ՂՄ-ները, որոնց ուսումնասիրությունը կատարվել է ըստ ստորև նշված բառարանների⁵:

ՂՄ-ՆԵՐԻ ԳՐԱԲՐՈՅԱՆ ՇԵՐՏ: Գրաբարը աշխարհաբարի մնացած ՂՄ-ներով այդքան հարուստ ու բազմառեսակ չէ: Կան ՂՄ-ներ, որոնք բնորոշ են միայն գրաբարի բառապաշարին, չեն փոխանցվել լեզվի զարգացման հետագա փուլերին և չկան բառապաշարի պատմական մյուս շերտերում: Աշխարհաբարին փոխանցված ՂՄ-ների որոշ մասը փոփոխություններ է կրել, որը պայմանավորված է լեզվի տվյալ փուլում գործող օրինաչափություններով: Այդ փոփոխությունները նկատելի են գրաբար — միջին հայերեն — աշխարհաբար ճանապարհին:

Որոշ ՂՄ-ներ նույնությամբ անցել են աշխարհաբարին: Դրանք գրաբարյան քարացած ձևեր են, որոնք սակավաթիվ են և ժամանակակից հայերենի դարձվածային հոմանիշների շարքերում իրենց տեղն ունեն: Օրինակ՝ *ձայն՝ բարբառոյ յանապատի // քար լուրջուն. նմանն զնմանն սիրտ // գլորավ խուփ՝ գտավ (առավ) պուտուկ. ակն ընդ ական՝ ատամն ընդ ատամն // խոտորնակին խոտորնակ:*

ՂՄ-ՆԵՐԻ ՄԻՋԻՆՅԱՅԵՐԵՆՅԱՆ ՇԵՐՏ: Միջինհայերենյան (այսուհետ՝ միջին) ՂՄ-ները գրաբարյանի համեմատությամբ սակավաթիվ են: Միջին են համարվում այն ՂՄ-ները, որոնք հիշատակված չեն գրաբարյան 5-11-րդ դարերի գրավոր աղբյուրներում: Ի տարբերություն գրաբարյան ՂՄ-ների՝ այստեղ ավելի շատ են դարձվածային տարբերակները: Դա պայմանավորված է նրանով, որ միջին հայերենը ժամանակին կապող օղակ էր գրաբարի և աշխարհաբարի միջև, և գրաբարյան ու աշխարհաբարյան լեզվական շատ տարրեր միախառնված են եղել: Օրինակ՝ *հոգին աւանդել - աւանտել հոգին* – մեռնել, շունչը փչել. *աչաց լոյս - աչաց լուս* – շատ սիրելի և այլն:

Կան միջին ՂՄ-ներ, որոնք իրենց ուրույն տեղն ունեն աշխարհաբարում և կառուցվածքով համապատասխանում են վերջինիս լեզվական օրինաչափություններին: Օրինակ՝ *սիրտ տալ* – քաջալերել, խրախուսել, սրտապնդել. *սիրտ մնալ* – վշտանալ, նեղանալ, մի թեթև խոսքից վիրավորվել. *միտք անել* – մտածել, խորհել, կշռադատել, ըմբռնել, հասկանալ. *գլուխ չունենալ* – ինչ-որ բանով զբաղվելու ցանկություն, մտադրություն, հետաքրքրություն չունենալ և այլն:

⁵ Գ. Աւետիքեան, Գ. Սիւրմելեան, Գ. Աւգերեան, Նոր բառգիրք հայկազեան լեզուի (Վիեննա, 1836-37թթ.), Ռ. Ղազարյան, Գրաբարի հոմանիշների բառարան (Անթիլիաս, 2006), Ռ. Ղազարեան, Գ. Աւետիսեան, Նորայայտ բառեր գրաբարում (Երևան, 2007), Լ. Յովհաննիսյան, Գրաբարի բառարան (Նոր հայկազյան բառարանում չվկայված բառեր, Երևան, 2010), Ռ. Ղազարյան, Գրաբարի դարձուածաբանական բառարան (Երևան, 2012), Լ. Խաչատրյան, Գրաբարի ուսումնական բառարան (Երևան, 2013), Ռ. Ղազարյան, Գ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան (Երևան, 2009), Գ. Աճառյան, Հայերեն գավառական բառարան (Թիֆլիս, 1913), Հայոց լեզվի բարբառային բառարան (Երևան, 2001-2012), Ա. Սարգսյան, Արևմտահայերենի բառարան (Երևան, 1991), Ռ. Սաքապետյան, Արևմտահայերեն-արևելահայերեն ուղղախոսական-բացատրական բառարան (Երևան, 2000) և Արևմտահայերենի և արևելահայերենի մոր բառարան (Երևան, 2011), Ա. Սուքիասյան, Ս. Գալստյան, Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան (Երևան, 1975), Խ. Բաղիկյան, Ուսումնական դարձվածաբանական բառարան (Երևան, 2002), Ա. Սուքիասյան Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան (Երևան, 2003), Պ. Բեդիրյան, Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան (Երևան, 2011):

ՊԱՆԵՐԻ ԲԱՐԲԱՆՈՎՅԻՆ ՇԵՐՏ: Մասնագիտական գրականության մեջ բարբառային բառապաշարի տարբերակման վերաբերյալ մոտեցումները տարբեր են: Հստակ չեն սահմանազատվում բարբառային, գավառական, ժողովրդախոսակցական բառաշերտերը:

Ընդհանրացնելով բարբառային բառապաշարի վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ նշված կարծիքները և հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՊԱ-ների համար լեզվաբանության մեջ չկա նմանատիպ դասակարգում՝ առաջարկում են բարբառային ՊԱ-ների պաշարը բաժանել երկու խմբի՝ հիմք ընդունելով Պ. Բեդիրյանի «Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան»-ում ՊԱ-ների կողքին արված նշումները⁶.

1. **Ընդհանուր բարբառային**, որի մեջ մտնում են բարբառային ծագում ունեցող արդեն գրականացված և գրական լեզվի շեմին կանգնած ՊԱ-ները: Վերջիններս հանրության մեծ մասին հասկանալի են և գործածական են խոսակցական լեզվում: Օրինակ՝ *կռունկի աչք* (Ալաշկերտ) – շատ պարզ, մաքուր. *բռռ աչք* (Արարատյան) – չկամ՝ նախանձոտ մարդ. *աչք ածել* (խսկց.) – (չորս կողմը) նայել, զննել, տնտղել և այլն:

2. **Նեղ բարբառային**, որի մեջ մտնում են որևէ տարածքի բնորոշ, մյուս բարբառների համար անհասկանալի և գրական լեզվի բառապաշարում ընդգրկվելու հեռանկար չունեցող թվով սահմանափակ ՊԱ-ներ: Օրինակ՝ *դամբիլ (սալոր) կարկատող* (Լոռի) – սարսափելի ժլատ. *մզամառ դանա (հորթ)* (Ղարաբաղ) – թուլամորթ. *դաթանը (կրունկ) կոխ տալ* (Ղարաբաղ) – հետապնդել և այլն:

Հիմք ընդունելով մասնագիտական գրականության մեջ բառերի համար կատարված բարբառային շերտի դասակարգումը⁷, ՊԱ-ների այդ շերտը կազմում են բարբառային բառապաշարի վերը նշված առաջին խմբի ՊԱ-ները: Դրանք դարձվածային հոմանշության անսպառ աղբյուր են: Հոմանշությունը դրսևորվում է և՛ տարբեր բարբառների, և՛ բարբառների ու գրական լեզվի ՊԱ-ների, և՛ բարբառային ՊԱ-ների ու բառային համարժեքների միջև: Օրինակ՝ *աչքերը փակել* (խսկց.՝ *խփել*) // *(ի) Վերին Երուսաղեմ գնալ* (զր.) // *հոգին (Աստծուն) տալ* (խսկց.՝ *փայ անել*) // *(ավանդել) // նալերը տնկել // (վերջին) շունչը փչել (ավանդել) // (այս) աշխարհի հետ հաշիվները փակել // աշխարհին հրաժեշտ տալ (մնաս բարով ասել) // հայր Աբրահամի գիրկն ընկնել (զոգում բազմել) // (իր) մահկանացուն* (հնց.՝ *կյանքը կնքել // Սահմեդի ծնկներին բարձրանալ // մահի բաժին* (խսկց.՝ *փայ*) *դառնալ // հրեշտակների հետ խոսել // շան պես սատկել (շանսատակ լինել, շան սատակ դառնալ) // աստղը խավարել (մարել, հանգչել, բրբ.՝ ճապղել) // կյանքի (սրտի) թելը կտրվել (փրթել) // կյանքին մնաս բարով ասել // մոխիր դառնալ // (կարմիր) արևից ընկնել (ժող.) // խնկի հոտի կարոտել // պապերի մոտ գնալ // հող դառնալ // փոշի դառնալ // ծովը մարել (կտրվել, հանգչել) և այլն (շարքում ընդգրկված է 79 ՊԱ) – մեռնել:*

Հոմանշությունը դրսևորվում է տարբեր մակարդակներում.

1) ըստ պատմական տարբեր շերտերի.

ա) *ուղբերը երկարացնել* (բրբ.) // *աստղը (ջուլկահորմ) ընկնել* (բրբ.) // *աստղը ճապղել* (բրբ.) // *տափովն անցնել* (բրբ.) // *ճարդան քաշել* (բրբ.) // *ճաշ*

⁶ Օրինակների բարբառային պատկանելությունը ներկայացված է նաև ըստ Հ. Աճառյանի «Հայերեն գավառական բառարան»-ի (Թիֆլիս, 1913) և «Հայոց լեզվի բարբառային բառարան»-ի (Երևան, 2001-2010) :

⁷ Ա. Սուքիասյան, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 2004, էջ 152-153:

դրվել (բրբ.) // սրտի թելը փրթել (բրբ.) ք) *ի Տէր հանգչել (գրբ.) // ի կենաց թռչիլ (գրբ.)*⁸,

2) ըստ ոճական տարբեր շերտերի.

ա) *աչքերը խփել (խսկց.) // արևը տալ (ժող.) // (կարմիր) արևից ընկնել (ժող.) // հոգին Աստուծու փայ անել (խսկց.) // արևը կծել (արևմտ. ժող.) // հող-գերեզման ըլլալ (արևմտ. ժող.) ք) (ի) Վերին Երուսաղեմ գնալ (գր.) // դեպի վերջին կացարան ծանապարհ ընկնել (գր.) // շիրիմ գրկել (գր.),*

3) արևելահայերեն և արևմտահայերեն ՂԱ-ներ.

կյանքեն ըլլալ (արևմտ.) // արևն առնել երթալ (արևմտ.) // գերեզման իջնել (արևել.) // հող դառնալ (արևել.),

4) համաբաղադրիչ ՂԱ-ներ.

այն (մյուս) աշխարհ գնալ (ընկնել, խսկց.)` աշխարհքն անց կենալ, արևմտ. բրբ.` Էն դիու աշխարհք երթալ (մեկնիլ) // աշխարհեն ազատիլ (բրբ.) // աշխարհը փոխել (արևմտ. հզվդպ.) // (այս) աշխարհի հետ հաշիվները փակել // (դեպի) լավագույն աշխարհ փոխադրվիլ (արևմտ.) // աշխարհին հրաժեշտ տալ (մնաս բարով ասել).

կյանքեն ըլլալ (արևմտ.) // (այս) կյանքը թողուլ (արևմտ.) // կյանքը խզվել (կտրվել) // երկմային կյանք վայելել // կյանքը փակել (ավարտել) // կյանքի (սրտի) թելը կտրվել (փրթել) // կյանքի ծանապարհը վերջանալ // կյանքին հրաժեշտ տալ // կյանքից հեռանալ // ի կենաց [«կյանքից»] թռչիլ (գրբ.) // կյանքն ու արևը ապրողներին բաշխել (տալ) (կյանքը բաշխել) // կյանքի հետ հաշիվները փակել // կյանքին մնաս բարով ասել // կյանքին վերջ դնել (տալ) // կյանքից գրկվել.

արևը խավարել (սևանալ, հանգել, արևմտ. մարիլ) // արևը կծկել (արևմտ. ժող.) // արևը տալ (ժող.) (բրբ.` արիվ խտալ) // արևը մայր (խսկց.` մեր) մտնել // (կարմիր) արևից ընկնել (ժող.) // արևն առնել երթալ (արևմտ.) և այլն:

Այս հոմանշային շարքի ընդհանուր հատկանիշը նրանց խոսքիմասային պատկանելությունն է (բայական):

Յոմանշություն կարող է դուստրվել նաև միևնույն բարբառի ներսում: Օրինակ՝ Ղարաբաղի բարբառում *ժլատ* բառի համար արձանագրված է հետևյալ հոմանշային շարքը⁹. *ասրէղ սաշկօղ // շօն խօզօղ // հափուռը պէնդ // ստակած էշու նալու շօն կրվօղ* և այլն:

ՂԱ-ՆԵՐԻ ԱՐԵՎՍԱՆՂԱՅԵՐՆԵՅԱՆ ՇԵՐՏ:

Ժամանակակից հայոց լեզվի բառապաշարում արևմտահայերենյան շերտն են կազմում արևմտահայ լեզվի ՂԱ-ները: Այս շերտի մեջ մտնում են այն ՂԱ-ները, որոնք պատմական մյուս շերտերում չկան: Ստորև ներկայացվող օրինակները բերված են Պ. Բեդիրյանի «Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան»-ից.

(այսպիսի) համեմատություն(ներ) ստանալ (առնել) - (այսպիսի) չափերի կամ բնույթի հասնել. հաշվեցույցը վճարել - պատշաճ պատասխանը տալ. վրձնի արագ հարվածով - կտրուկ մի կարգադրությամբ, հրամանով. հայուն մէջ երթալ - Կովկաս գաղթել. ինքն իրեն հարս ու փեսա ըլլալ - ինքնակոչ մեջտեղ գալ՝ ելնել. գէշ երթալ - վատ ընթացք ունենալ և այլն:

⁸ Այս օրինակները, ավանդված լինելով գրաբարից, մտնում են գրական լեզվի բառապաշար՝ որպես բարձր ոճի ՂԱ-ներ:

⁹ Շ. Սինասյան, Ղարաբաղի բարբառի դարձվածքները, ԹԱ, ԳԳ ՊԱԱ, 1998:

ՂԱՆԵՐԻ ԱՐԵՎԵԼԱՅԱՅԵՐԵՆՅԱՆ ՇԵՐՏ: Նոր բառերի հետ բառապաշար են մուտք գործում նաև նոր ՂԱ-ներ, որոնք չեն հանդիպում գրաբարյան, միջինհայերենյան, բարբառային և արևմտահայերենյան շերտերում: Նշված շերտը ՂԱ-ներով հարստացնելու աղբյուր են նորաբանությունները, նորագույն փոխառությունները, որոնք հանդիպում են հրապարակախոսական, գեղարվեստական, նաև առօրյա-խոսակցական ոճերում: Օրինակ՝ *ընդհանուր հավասարեցում* - լավն ու վատը, լավին ու վատին հավասար դիտելը, ներկայացնելը. *իններորդ ակիբ* - վերջին հեղափոխիչ ազդակ, փուլ. *առաջին ջութակ* - մի մարզում գլխավոր՝ առաջատար դերակատարում ունեցող անձ և այլն¹⁰:

2. ՂԱՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ՀՈՄԱՆՇՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԵՎԵԼԱՅԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԱՐԵՎԱՏԱՅԱՅԵՐԵՆՈՒՄ

Աշխարհաբարի երկու տարբերակներում առանձնահատուկ տեղ ունեն ՂԱ-ները: Դարձվածային պաշարում արևելահայերենի և արևմտահայերենի ՂԱ-ները հոմանշային հարաբերություն ոչ հաճախ են դրսևորում: Ավելի հաճախ սրանք կազմում են դարձվածային տարբերակներ, որոնց բաղադրիչները տարբերվում են գրական լեզվի այդ երկու տարբերակներին յուրահատուկ բառաբերականական ձևերով:

Արևելահայերեն և արևմտահայերեն ՂԱ-ները որոշակի քանակով հոմանիշներ, այնուհանդերձ, կազմում են: Ստորև երկու տարբերակների հոմանիշ ՂԱ-ները ներկայացվում են հետևյալ դասակարգմամբ.

1) միայն արևմտահայերենում գործածվող ՂԱ-ներ, որոնց մի մասը իր հոմանիշ(ներ)ն ունի արևելահայերենում¹¹: Օրինակ՝ *գեշին գալ* (արևմտ.) // *սիրտը կուչ գալ* (արևել.) - ազդվել, նեղվել. *խելքը դպնիլ* (արևմտ.) // *խելքը թռցնել* (արևել.) - խելագարվել. *անուշի կապել* (արևմտ.) // *գլխին յուղ քսել* (արևել.) // *քթին ձեթ տալ* (արևել.) // *օձի լեզու թափել* (արևել.) - համոզել, հաշտեցնել:

2) Առածների, թևավոր խոսքերի, դիպուկ արտահայտությունների, անծեքների, օրինանքների միջոցով հանդես եկող հոմանիշներ: Օրինակ՝ *բարեւ տաս՝ բարեկենդանի կու գայ* (արևմտ.) // *երես տաս՝ աստառ կուզի* (արևել.) - անամոթ է. *ազաւիլը կերակրողին աչքը կհանէ* (արևմտ.) // *օձը տաքացնողին է կծում* (արևել.) - ապերախտ է:

Հոմանշային հարաբերություն կարող են դրսևորել և՛ տարբեր բաղադրակազմ ունեցող, և՛ կառույցի որոշ բաղադրիչների համընկնունով կազմված ՂԱ-ները:

1) Տարբեր բաղադրակազմ ունեցող դարձվածային հոմանիշներ. օրինակ՝ *երկիրը կոխել* (արևմտ.) // *կալմեջ անել* (արևել.) // *չորս կողմը բռնել* (արևել.) - պաշարել. *թել ու դերձան դառնալ* (արևմտ.) // *կաշին ու ոսկորը մնալ* (արևել.) // *մասունք կտրել* (արևել.) // *փորը մեջքից կպնել (կպչել)* (արևել.) // *մոմի պես հալվել* (արևել.) - միհարել և այլն:

2) Բաղադրիչների համընկնունով կազմված դարձվածային հոմանիշներ. օրինակ՝ *գլխուն շան քարոզ կարդալ* (արևմտ.) // *գայլի գլխին ավետարան կարդալ* (արևել.) - խրատել. *բաց պատարագ* (արևմտ.) // *բաց բերան* (արևել.) - անգաղտնապահ և այլն:

¹⁰ Օրինակներն ըստ Պ. Բեդիրյանի «Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան»-ի (2011):

¹¹ Ա. Սուքիասյան, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1999, էջ 317:

Արևելահայերեն և արևմտահայերեն ՂՄ-ների հոմանշային շարքերը կարող են լինել սակավանդամ և բազմանդամ: Ստորև ներկայացվող բազմանդամ շարքում ընգրկված է շուրջ 15 արևմտահայերեն և 42 արևելահայերեն ՂՄ:

վախենալ // սարսափել // երկյուղել // ահաբեկվել // զարհուրել // զարգանդել - **(արևմտհ.)** արյունը (երակներում) ցամքիլ (արևելհ.՝ ցամաքել) // արյունը ջուր կտրիլ // լեզուն փորը քաշել // լեղածաք (լեղապատառ) ըլլալ (արևելհ.՝ լինել) // լեղին պատռիլ // լեղին (սիրտը) փոթիլ // փորը քշել // սիրտը դող ելլել (դող առնել) // սիրտը դողի մէջ ըլլալ // սիրտը վեր ելլալ // սիրտը թելի մը վրայ ըլլալ // սիրտը պատռիլ // սիրտը փորիմ մէջ հյնալ // սիրտը վեր ելլել // սիրտը փորում ծաթիլ // **(արևելհ.)** ահ առնել // ահը սրտին առնել // ահը սիրտն ընկնել // ահ (վախ) ունենալ // ահուդողը ջանն առնել // ահուդողի մէջ ընկնել (լինել) // աչք ծպել // արյունը թան դառնալ (հզվոյալ) // արյունը (լեղին, սիրտը) ջուր դառնալ // երկյուղ կրել (զգալ) // զարգանդ բռնել (զալ, պատել) // երկյուղով բռնվել // թուրք կուլ տալ // թուրք (լերդը) կատիկը թռչել // (բերանի, բերանում, բերանի մէջ) թուրք (թուրք-մուրք, թուրք ու մուրք) կպչել (չորանալ, սառչել, ցամաքել) // լեղին ճաքել (պատռ(վ)ել, տրաք(վ)ել, չորանալ, ցամաքել) // հոգին կորեկի հատիկ դառնալ // ծայնը (ծենը) փորը գցել (քաշել, ընկնել) // սիրտը արյուն կոխել // սիրտը ծով ելնել (լինել) // սիրտը կըմակը ծեծել // սիրտը կտրվել՝ փորն ընկնել // սիրտը պորտի գլուխը թռչել // սիրտը փորում(ը) ձիավոր դառնալ // մկան ծակին երանի տալ // մկան սիրտ ունենալ և այլն:

Հանդիպում են նույն ձևն ունեցող ՂՄ-ների այնպիսի օրինակներ, որոնք գրական երկու լեզուներում բոլորովին տարբեր և իրար հետ առնչություն չունեցող իմաստներ են արտահայտում: Այսինքն՝ նման ՂՄ-ներն աշխարհաբարուն կարելի է համարել համանուններ: Օրինակ՝

խոսք ուզել - արևելհ.՝ խնամախոսել, նշանել, արևմտհ.՝ խոսելու ցանկություն հայտնել, խոսելու իրավունք խնդրել: **գլուխ գլխի տալ** - արևելհ.՝ 1.միաբանել, միանալ, 2.խորհրդակցել, 3.որոշել, վճռել, 4.իրար զալ, արևմտհ.՝ ամուսնանալ: **աչք առնել** - արևելհ.՝ 1.չարակնել, չար աչք կպչել, 2.տեսնել, նկատել, արևմտհ.՝ 1.մտադրվել, 2.աչքի առաջ ունենալ, նկատի ունենալ, 3.հաճելի նայվել, աչք ծակել, շլացնել և այլն:

3. ԱՐԵՎՍԱԳԱՅԻՆ (ՄԱՍԱՄԲ՝ ԱՐԵՎԵԼԱԳԱՅԻՆ) ՂՄ-ՆԵՐՆ ԸՍՏ ԲԱՌԱՐԱՆՆԵՐԻ

Կատարել ենք Ա. Սուքիասյանի և Ս. Գալստյանի «Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան»-ի (1975թ.), Ռ. Սաքապետոյանի «Արևմտահայերեն-արևելահայերեն ուղղախոսական-բացատրական բառարան»-ի (2000թ.) և Պ. Բեդիրյանի «Հայերենի դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան»-ի (2011թ.) զուգադրական քննություն:

Առաջին և երրորդ բառարանները զուտ դարձվածաբանական են, որոնցում հեղինակները ՂՄ-ները հիմնավորում են բնագրային բազմաթիվ օրինակներով¹²: Պ. Բեդիրյանի բառարանում ՂՄ-ները հանգամանորեն ներկայացված են գրական, խոսակցական, բարբառային տարբերակներով: Ռ. Սաքապետոյանի վերը նշված բառարանն ընդգրկում է շուրջ 16000 արևմտահայերեն բառ և ՂՄ: Վերջիններիս քանակը հասնում է շուրջ 1341-ի, որոնցից 1113-ի կողքին (**դարձ.**) նշումը կա, իսկ 228-ինը՝ ոչ: Սրանց մեծ մասը առկա է դարձվածաբանական մյուս բառարաններում: Հեղինակը նշված բառարանում

¹² Ա. Սուքիասյանի և Ս. Գալստյանի նշված բառարանն ընդգրկում է շուրջ 24000, իսկ Պ. Բեդիրյանի բառարանը՝ 25310 ՂՄ:

ուշադրություն է դարձրել բառերի և ԴՄ-ների արտասանությանը, որը հատուկ նշումով տրվում է վերջիններիս կողքին:

Ա. Սուբիասյանի և Ս. Գալստյանի վերոնշյալ բառարանում արևմտահայ տարբերակին են պատկանում 100 ԴՄ¹³, որոնցից Ռ. Սաքապետոյանի գրքում վկայված են 50-ը, իսկ Պ. Բեդիրյանի գրքում՝ 76-ը: Երեք բառարանում արևմտահայերեն 100 ԴՄ-ից նշված են 43-ը: Այստեղից հետևում է, որ սրանք գործածական են արևմտահայերենի շատ տարբերակներում (պոլսահայերեն, լիբանանահայերեն և այլն): Կա շուրջ 17 ԴՄ՝ վկայված միայն 1-ին բառարանում: Օրինակ՝ *ամսական կապել* (արևմտհ.) – աշխատավարձ՝ ռոճիկ նշանակել. *ստակի մը ըլլալ* (արևմտհ.) – խայտառակվել, պատիվը կորցնել. *ծուկ մը տալ* (արևմտհ.) – մեկի մոտից շտապով հեռանալ՝ հետը երկար չխոսելու համար, պուկ անել. *բերնեն ավետիս առնել* (խսկց. արևմտհ.) – մեկից անձամբ լուր ստանալ. *թաթուլի(ն) գալածոշ(ը)* (արևմտհ.) – մի բան աներեսաբար՝ գոռով մեկի վզին փաթաթելը, չափազանցված հյուրասիրություն և այլն:

Վերոնշյալ բառարանների զուգադրական քննությամբ պարզվել է, որ բազմաթիվ ու տարաբնույթ տարբերություններ ունեն արևմտահայերեն (ինչպես նաև արևելահայերեն) ԴՄ-ները գրային, քերականական, հոմանշային կամ տարբերակային ձևերում, բաղադրիչների տարբեր դասավորության, որևէ բաղադրիչի հավելման (կամ հակառակը) դեպքերում: Նման ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս կազմելու ԴՄ-ի ավելի բազմակողմանի և ամբողջական պատկերը՝ ունենալով նրա արևելահայերեն, արևմտահայերեն, բարբառային, հնացած, ժողովրդախոսակցական, հոմանշային, տարբերակային և այլ ձևեր:

Երրորդ գլխում ուսումնասիրվում է ԴՄ-ների ոճական հոմանշությունը՝ ըստ գործառության ոլորտի, հուզարտահայտչական երանգավորման, կատարվում է խոսքի պատկերավորման և արտահայտչական դարձվածային միջոցների, իմաստային, ոճական, իմաստային-ոճական, ինչպես նաև լեզվական և խոսքային դարձվածային հոմանիշների քննություն:

1. ԴՄ-ների ոճական հոմանշությունը

ԴՄ-ի ոճական արժեքի և խոսքի ոճավորման համար շատ կարևոր է ոճական հոմանշությունը:

Ոճական հոմանիշների համար նույնն է հոմանշության ընդունված չափանիշը՝ իմաստով նույն կամ մոտ լինելը: Այս հոմանիշները տարբերվում են գործառական ոլորտներով և հուզարտահայտչական երանգներով:

Մասնագիտական գրականության մեջ բառերի համար կատարված ոճական դասակարգումը մասնավորեցրել ենք ԴՄ-ների համար: Ըստ այդմ՝ ԴՄ-ների ոճական հոմանշության դասակարգումը կատարվել է հետևյալ սկզբունքներով.

1. համագործածական և սահմանափակ գործածություն ունեցող դարձվածային հոմանիշներ,
2. հուզարտահայտչական երանգավորում ունեցող դարձվածային հոմանիշներ,
3. իմաստային, ոճական և իմաստային-ոճական հոմանիշներ,
4. լեզվական և խոսքային հոմանիշներ,
5. խոսքի պատկերավորման և արտահայտչական դարձվածային միջոցների հոմանշություն:

¹³ Համեմատական ուսումնասիրությունը կատարվել է Ա. Սուբիասյանի և Ս. Գալստյանի բառարանի հիման վրա՝ հաշվի առնելով ժամանակագրական փաստը:

2. ԴԱ-ները և դրանց հոմանշությունն ըստ գործառնության ոլորտի

Ըստ գործառնության ոլորտի՝ ԴԱ-ները երկու խմբի են բաժանվում: Առաջին խմբի մեջ մտնում են ոճականորեն չեզոք, գործառնական ոլորտի սահմանափակում չունեցող, «գեղագիտական պոստեմփայից գուրկ»¹⁴ ԴԱ-ները, որոնք կոչվում են համագործածական կամ չեզոք¹⁵:

Համագործածական կամ չեզոք շերտի մեջ մտնում են առօրյա հաղորդակցման համար կարևոր նշանակություն ունեցող ԴԱ-ները, որոնք լեզվի հիմնական բառաֆոնդի և բառապաշարի ակտիվ մասն են կազմում: Օրինակ՝ *աչքի ընկնել* (արևմտ.՝ *աչքի հյնալ*) – նկատվել, երևալ, ուշադրություն գրավել. *ծեռք բերել* – նվաճել, տիրել, տիրանալ, գտնել և այլն:

Երկրորդ խմբի մեջ մտնում են սահմանափակ գործածություն ունեցող ԴԱ-ները, որոնք ամենօրյա գործածություն չունեն, գործածվում են գործառնական այս կամ այն ոճում¹⁶: Դրանք են հնաբանությունները, նորաբանությունները, բարբառաբանությունները, օտարաբանությունները, փոխառությունները, ծածկախոսությունները, հասարակաբանությունները, գեղականությունները, ժարգոնային ԴԱ-ները, որոնք բառապաշարի պասիվ շերտի մեջ են մտնում:

Համագործածական և սահմանափակ գործածություն ունեցող ԴԱ-ների գործառնության ոճական տարբերակումներից է նաև նրանց՝ խոսակցական և գրքային շերտերի պատկանելությունը: Ուստի և, ըստ գործառնության ոլորտի, տարբերակվում է ԴԱ-ների և երկու շերտ՝ բանավոր-խոսակցական և գրավոր-գրքային: Բանավոր-խոսակցական բնույթ ունեցող ԴԱ-ները գործածվում են բանավոր խոսքում, իսկ գրավոր-գրքայինը՝ գրավոր գործառնական ոճերում:

Գրավոր – գրքային շերտում առանձնացվում են *գիտական, վարչական, հրապարակախոսական, գեղարվեստական* ենթաշերտեր:

3. ԴԱ-ները և դրանց հոմանշությունն ըստ հուզարտահայտչական երանգավորման

Սահմանափակ գործածություն ունեցող ԴԱ-ները կարելի է խմբավորել ըստ դրական և բացասական վերաբերմունքի. **դրական** – *ա՛յ քեզ բան* (գարմանք). *ի՛նչ են ասել* (հիացմունք-գարմանք). *աչքը լույսի մեջ մնա* (օրհնանք). **բացասական** – *տերը թաղեմ* (զայրույթ). *տունը շինվի* (հանդիմանություն – նախատինք). *խելքին նայիր* (հեզմանք) և այլն:

Սահմաններ դնել հուզարտահայտչական երանգ ունեցող ԴԱ-ների միջև դժվար է, քանի որ դրանք շատ փոփոխական են և կարող են ներթափանցել հուզական տարբեր դաշտեր: Վերը կատարված դասակարգումը խիստ պայմանական բնույթ է կրում:

Հոմանշությունը դրսևորվում է նաև հուզարտահայտչական երանգավորում ունեցող ԴԱ-ների միջև: Հոմանշային նման շարքերը սակավաթիվ են: Օրինակ՝ **դրական վերաբերմունք արտահայտող** – *դու մի ասա // բա չես ասի. ա՛յ քեզ բան // մեղա Աստծու. տա Աստված // Աստված բարին կատարի. մեր մեջ*

¹⁴ Ա. Մելքոնյան, Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, Երևան, 1984, էջ 89:

¹⁵ Մասնագիտական գրականության մեջ նշվում են նաև *միջոճական* (Լ. Եզեկյան, Ա. Մելքոնյան. Ա. Մարության), *միջոճային* (Ա. Սուքիասյան), *համալեզվական* (Խ. Բաղիկյան) տերմինները:

¹⁶ Լեզվաբանական գրականության մեջ այս շերտը ևս միասնական անվանում չունի. *հատուկ* (Գ. Ջահուկյան), *դրական գնահատություն ունեցող* (Ա. Սուքիասյան), *հասարակայնորեն տարբերակված* (Լ. Եզեկյան), *գործառնականորեն տարբերակված* կամ *գործառնական-ոճական նշույթավորում ունեցող* (Ս. Էլոյան), *ոճականորեն նշույթակիր* (Ա. Մարության):

ասած // խոսքը մեր մեջ. արևդ սիրեն // գլխիդ մատաղ // գլխիդ մեռնեն.
բացասական վերաբերմունք արտահայտող - գործիդ կաց // բանիդ գնա. հերն
անիծած // գլուխը քարը և այլն:

4. Իմաստային, ոճական, իմաստային-ոճական դարձվածային հոմանիշներ

Իմաստային դարձվածային հոմանիշները բաժանվում են երկու խմբի՝
նույնանիշների և համանիշների:

Ոճական դարձվածային հոմանիշներն ունեն գործառական և հուզար-
տահայտչական տարբերություններ: Դարձվածային ոճական հոմանիշները կա-
րելի է դասակարգել՝

ա) ըստ դրական կամ բացասական վերաբերմունքի.

դրական վերաբերմունք արտահայտող - *աչք գցել // աչք ունենալ //
աչքն ու ականջը շոյել // աչքը վրան լինել (մնալ) // սրտով լինել // սիրտը (հոգու
մեջ) մտնել // հավան լինել // աստղը բռնել // սիրտը կպչել // սրտին անուշ գալ //
սրտով լինել* - հավանել.

բացասական վերաբերմունք արտահայտող - *ասեղ մաշկող // աչքը
ծակ // ձեռքը պինդ // կոպեկի համար հոգի տվող // ձեռքը գրպանից խռով // օձ
մաշկող // լվից ճրագու հանող // մութ տեղը մազ մանող* - ժլատ:

բ) ըստ լեզվի պատմական տարբեր շերտերի պատկանելության.

ձայն բարբառոյ յանապատի (գրբ.) // *քար լռություն* (աշխարհբ.) - ան-
արձագանք. *տվնջան լուսատու* (գրբ.) // *երկնային ծանապարհորդ*
(աշխարհբ.) // *մեծ լուսատու* (աշխարհբ.) - արև, արեգակ. *ի սիրտ էլանել* (գրբ.)
(*սիրտը էլուշ - բրբ.*) // *գալի հալավ(ը)* (*հագուստը*) *հագնել* (բրբ.) // *գլուխի թա-
սը թռիլ (դառնալ)* (արևմտհ.) (*գլխի դափաղը ժած գալ* (բրբ.)) // *շուն կտրել*
(*դառնալ*) (աշխարհբ.) // *սիրտը բերանով դուրս գալ* (աշխարհբ.) // *իր գլուխը
մոռանալ* (աշխարհբ.) - *ինքզիքը դուրս գալ* (*մոռանալ*) (արևմտհ.) - զայրա-
նալ, բարկանալ:

գ) ըստ լեզվի գործառական տարբեր շերտերի պատկանելության.

մեկի հետ լեզու թրջել (ժող.) // *լեզու առնել* (ժող.) // *լեզվի կպպերը
արծակել* (ժող.) // *բլբուկ կտրել* (ժող.) // *աչքերը փակել, բերանը բացել* (խսկց.)//
բերանը գալ (խսկց.) // *բերանը շաղ տալ* (խսկց.) (*ռեխը շուռ ածել* (բրբ.)) //
ռեխին տալ (բրբ.) // *լեզուն պռունկով անել* (բրբ.) // *լեզվին գոռ տալ* (խսկց.) //
լեզվին տալ (խսկց.) // *լեզուն պյուլպյուլի պես դառնալ* (արևմտհ., խսկց.) //
բերանը խոփով բանալ (արևմտհ., բրբ.) // *բերան բերնի տալ* (արևմտհ., խսկց.)//
լեզու ածել (*թափել*) (խսկց.) և այլն – խոսել:

Իմաստային-ոճական դարձվածային հոմանիշները հակադրվում են ի-
րենց և՛ իմաստային, և՛ ոճական հատկանիշներով: Այսինքն՝ շարքում
ընդգրկված հոմանիշները ունեն և՛ նրբիմաստային, և՛ գործառական, և՛ հուզար-
տահայտչական տարբերություններ: Օրինակ՝ *աչք ածել // աչք աչքի գցել // աչք
ծգել* (արևմտհ.) // *աչք տնկել // աչքերը չորս անել // աչքերին ազատություն
տալ // աչքերով կուլ տալ // աչքը աչքին առնել // աչքը ջուր կտրել // աչքի անց-
կացնել // աչքով ուտել // հայացք գցել* (արևմտհ.՝ ձգել) // *մտիկ անել // հայացքը
սահեցնել // քաղցր աչք գցել // մի աչք դառնալ // աչքերը դուրս թռչել // մեկի
երեսը դուրս գալ // իրոր երես պահել* և այլն:

5. Լեզվական և խոսքային դարձվածային հոմանիշներ

Լեզվական հոմանիշները հոմանշային հարաբերություն են հաստա-
տում խոսքաշարից դուրս: Այս շարքերը բազմաթիվ ու բազմազան են և հանդես
են գալիս գործառական բոլոր ոճերում: Օրինակ՝ *Լեղին ջուր կտրեց, կապ
ընկավ լեզուն*: (Յ. Թումանյան, Ընտիր երկեր, Երևան, հ. 1, 1985, էջ 273)

խոսքային հոմանիշները դրսևորվում են տվյալ խոսքաշարում համատեղ գործածության ժամանակ: Ի տարբերություն լեզվականի՝ սրանք հոմանշային որոշակի շարքեր չունեն: Խոսքային հոմանիշները խոսքաշարից դուրս հոմանիշներ չեն կարող լինել: Օրինակ՝

Լորագետը ... Փոքրիկ մի գետ,

... եռում է նա ու հերտտում

Պագազում է ու միսն ուտում: (Յ.Սահյան)¹⁷

6. **խոսքի պատկերավորման և արտահայտչական դարձվածային միջոցների հոմանշությունը**

Դարձվածային համակարգում գործում են ռճական բոլոր միջոցները՝ փոխաբերություն, համեմատություն, փոխանունություն, խորհրդանշություն, շրջասույթ, կրկնություն, զեղչում, աստիճանավորում, չափազանցություն, նվազաբանություն, բառախաղ, պարադոքս, օքսիմորոն, համըմբռնում¹⁸: Դրանց շարքին պետք է ավելացնել նաև դարձվածային մակդիրը, որն արտահայտիչ ու ազդեցիկ խոսքի նախապայմաններից մեկն է:

Խոսքի պատկերավորման ու արտահայտչական դարձվածային միջոցների հստակ սահմանազատում չի կարող լինել: Նույն ԴՄ-ը կարող է տարբեր արտահայտություն ունենալ:

Խոսքի պատկերավորման և արտահայտչական միջոցների միջև ևս առկա են հոմանշային հարաբերություններ: Հոմանշությունը դրսևորվում է և՛ նույն, և՛ տարբեր տեսակների միջև: Օրինակ՝ *լեզուն քաշել* (պրոքս., շրջս.) // *լեզուն գրպանը դնել* (պրոքս., շրջս.) - չխոսել, լռել, չարտասանել. *երես ունենալ* (շրջս.) // *երեսը դեմ տալ* (շրջս., փոխան.) – համարձակություն ունենալ, աներեսություն անել. *աքլորի բեռ* (նվազ.) // *եղունգի չափ* (նվազ., համեմտ.) // *ծոփ աչք* (նվազ., փոխան.) – քիչ, աննշան. *իր միսն ուտել* (պրոքս.) // *աչքերից կրակ (կայծեր) դուրս գալ (ժայթքել, թափվել)* (չափազ.) // *իրեն ուտել* (պրոքս.) - զայրանալ, բարկանալ և այլն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Դարձվածային հոմանշությունը սկզբունքորեն չի տարբերվում բառային հոմանշությունից: Տարբերությունն այն է, որ ԴՄ-ներով արտահայտված հոմանիշները փոխաբերական-այլաբանական իմաստ ունեցող կայուն կապակցություններ են, որոնք անբաժանելի և իմաստով ամբողջական բառակապակցություններ կամ նախադասություններ են:

Ժամանակակից հայերենում հոմանիշ են այն ԴՄ-ները, որոնք ունեն նույն կամ մոտ իմաստներ, բայց կարող են տարբերվել ռճական կիրառություններով ու հուզարտահայտչական գունավորումներով (երանգավորումներով) և որոշակի համատեքստերում փոխարինվել իրարով:

2. ԴՄ-ների և բառերի համար ընդհանուր հատկանիշ է տարբեր խոսքիմասային նշանակությամբ գործածությունը:

3. Տարբեր բառարաններում ԴՄ-ների իմաստները տարբերվում են և՛ իմաստով, և՛ քանակով: Կան որպես մենիմաստ վկայված ԴՄ-ներ, որոնք բազմիմաստ են, քանի որ ունեն տարբեր իմաստներ:

¹⁷ Օրինակն ըստ Լ. Եգեկյանի «Ոճագիտություն» գրքի (Երևան, 2003, էջ 224):

¹⁸ Մասնագիտական գրականության մեջ խոսքի պատկերավորման և արտահայտչական բառային միջոցներին տրված բնորոշումները միանգամայն ընդունելի են ԴՄ-ների համար:

4. Երկանդամ կառույցներ են նաև թվական+դերանուն, ածական+դերանուն գոյականական, դերբայ+դերբայ, դերանուն+դերբայ ածականական, եղանակավորող բառ+բայ՝ արտահայտված թղծական եղանակով եղանակավորող (հոմանիշ) ԴՄ-ների կաղապարները:
5. Միևնույն ԴՄ-ն իր արտահայտած տարբեր իմաստներով հոմանշային տարբեր շարքեր է կազմում: Ընդհանրական իմաստ ունեցողները հատվում են դաշտերից մեկում:
6. ԴՄ-ների տարբերակների հատկանիշ է նաև *նույն բաղադրիչի ածականական և հարակատար դերբայի* ձևը:
7. Հականիշ են այն ԴՄ-ները, որոնք ձևային տեսակետից թեև հարանուններ են, սակայն իմաստային առումով հակիմաստ են:
8. Հարուստ են համաբաղադրիչ (նույն կամ ընդհանուր բաղադրիչ ունեցող) մարմնի մասերի անվանումներով (*սիրտ, գլուխ, աչք, ձեռք, ոտք*), *բերան, երես, լեզու, քիթ, ականջ, մատ, մեջք, ստամ, ճակատ, շրթունք, հոնք*), կենդանիների անուններով (*շուն, էշ, ձի, կատու, եգ, այծ, ոչխար, կով, խոզ, գայլ, մուկ, աղվես, արջ, ուղտ, առյուծ, հավ, աքաղաղ, աքլոր, թութակ, ծիտ, ագռավ, արծիվ, ծիծեռնակ, սիրամարգ, կռունկ, ծուկ, խեցգոտին, կրիա, կոկորդիլոս, օձ, ծանձ, ոջիլ*), գունանուններով (*սև, կարմիր, կանաչ, սպիտակ, ծերմակ, կապույտ, դեղին, վարդագույն, երկնագույն*) ԴՄ-ների հոմանշային շարքերը:
 Դիտարկվել է մարմնի մասերի անվանումներով 4423 ԴՄ-ների 214, կենդանիների անուններով 754 ԴՄ-ների 52, գունանուններով 145 ԴՄ-ների 10 հոմանշային շարք:
 Համաբաղադրիչ ԴՄ-ների հոմանշային հարստությունը պայմանավորված է երեք հանգամանքներով՝ ա) ըստ նույն բաղադրիչով կազմված ԴՄ-ների քանակի, բ) ըստ ԴՄ-ի բազմիմաստության, գ) ըստ կամընտրական բառերի:
 Հոմանշությունը դրսևորվում է իմաստային նույն խմբերի նույն կամ տարբեր բաղադրիչներով և նշված իմաստային տարբեր խմբերի ԴՄ-ների միջև:
9. Ըստ լեզվի պատմական զարգացման և շերտաբանական դասակարգման՝ ԴՄ-ները բաժանվում են *գրաբարյան, միջինհայերենյան, բարբառային, արևմտահայերենյան և արևելահայերենյան* շերտերի:
 Գրաբարից աշխարհաբարին են անցել ա) մասնակի փոփոխություններ կրած, բ) բաղադրիչ(ներ)ի իմաստ(ներ)ն այլ բառով արտահայտված, գ) աշխարհաբարում այլ միավորով փոխարինված, դ) անփոփոխ (քարացած) ձևերով ԴՄ-ները, այդ թվում նաև հոմանշային հարաբերության մեջ գտնվողները: ԴՄ-ների մի մասը բնորոշ է միայն գրաբարյան ժամանակաշրջանին:
 Գրաբարյան սահմանափակ գործածություն ունեցող որոշ ԴՄ-ներ իրենց տեղն ունեն աշխարհաբարյան դարձվածային հոմանիշների շարքում:
 Աշխարհաբարին անցած միջինհայերենյան ԴՄ-ները սակավաթիվ են: ԴՄ-ները գրաբար — միջին հայերեն — աշխարհաբար և միջին հայերեն — աշխարհաբար անցման ճանապարհին կամ ենթարկվել բառաբերականական փոփոխությունների, կամ անցել են նույնությամբ՝ կազմելով դարձվածային տարբերակներ:
 ԴՄ-ների, այդ թվում հոմանշային հարաբերության մեջ գտնվողների բարբառային շերտը երկու խոշոր խմբի է բաժանվում՝ ա) ընդհանուր բար-

բառային, բ) նեղ բարբառային: Դրանց հոմանշությունը դրսևորվում է ըստ ա) պատմական, բ) ոճական տարբեր շերտերի, գ) համաբաղադրիչ ԴԱ-ների:

Նորաբանություն են արևելահայերեն 28 (*հրածեշտ տալ աթռոհին, փողով առնել, ամոթի քողը ընկնել, մութ բաներ (չ)մնալ, արևոտ օրվա կարկուտ լինել, կոկորդոս խրված ոսկոր, կոկորդոս խրված փուշ, թեմա բացել, ձեռքը գրպանը տանել չսիրել, գրքի որդ, այլ երանգ տալ, հոտած ջրում ապրել, պլպլան դառնալ, հորթային անհոգություն, տաք պահել, անհեթեթություններով կերակրել, համբերության փարաջան հագնել, վրան եվրոպայի փոշի նստել, գլխին եվրոպատուհաններ դնել, ականջները ռադիոժածկույթից դուրս լինել, վրայից տանել, վազող տող լինել, էջեր ամբարել, խելքին դուռ դնել, բերանը հողով փակել, մութ գործեր բռնել, գաղտնիքը տանել գերեզման, ծիածանի յոթ գույնը տալ*), արևմտահայերեն 12 (*պարտուիլ հիանդութեան, կլոր սեղանի ծիրեն դուրս իյնալ, ժայռեն հաց հանել, երեք կապիկներու խաղը բեմադրել, աղբը ալել գորգին տակ, մատաղ հոգի, դասական դարձած յանկերգ, դեկի ուղղութիւնը փոխել, շարունակել ցլամարտը, դեզերել լարերուն վրայ, դիւրախաբ միտք ձեռք գցել, չորս պատերը բարձրացնել*) ԴԱ-ները, որոնք ներկայացված են ըստ արևելահայերեն և արևմտահայերեն մասուլի, հեռուստատեսային տարբեր հաղորդումների, կրկնօրինակված հեռուստաֆիլմերի, առօրյա խոսակցությունների և բառարաններում արձանագրված չեն:

10. Տարբեր հեղինակների բառարաններում ներկայացված արևելահայերեն և արևմտահայերեն նշում ունեցող շատ ԴԱ-ների օրինակներ համանուններ են, քանի որ ունեն տարբեր իմաստներ:
11. Ըստ Ա. Սուբխայանի և Ս. Գալստյանի «Չայոց լեզվի դարձվածաբանական բառարան»-ի, Ռ. Սաքապետոյանի «Արևմտահայերեն-արևելահայերեն ուղղախոսական-բացատրական բառարան»-ի և Պ. Բեդիրյանի «Չայերենի դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան»-ի զուգադրական քննության՝ արևմտահայերեն (ինչպես նաև արևելահայերեն) ԴԱ-ները տարբերություններ ունեն գրային, քերականական, հոմանշային կամ տարբերակային ձևերում, բաղադրիչների տարբեր դասավորության, որևէ բաղադրիչի հավելման (կամ հակառակը) դեպքերում:

12. ԴԱ-ների ոճական հոմանշությունը ընտրության լայն հնարավորություններ է ընձեռում: ԴԱ-ի ճիշտ ընտրությունը կապված է գործառական ոլորտի, խոսքաշարի, խոսողի անձնական, անհատական հատկանիշների հետ (խառնվածք, կրթություն, մասնագիտություն, դաստիարակություն, զարգացածության աստիճան, աշխարհընկալում, հոգեկան վիճակ և այլն):

Բառերի ոճական դասակարգման հիման վրա ԴԱ-ների ոճական հոմանշությունը կատարվում է տարբեր սկզբունքներով՝ ըստ ա) գործառության ոլորտի, բ) հուզարտահայտչական երանգավորման, գ) իմաստային, ոճական և իմաստային-ոճական, դ) լեզվական և խոսքային հատկանիշների և ե) խոսքի պատկերավորման ու արտահայտչական միջոցների:

Ըստ գործառության ոլորտի՝ ԴԱ-ները, այդ թվում նաև հոմանիշները, բաժանվում են երկու խմբի՝ համագործածական կամ չեզոք և սահմանափակ գործածություն ունեցող (հնաբանություններ, նորաբանություններ, բարբառաբանություններ, օտարաբանություններ, փոխառություններ, ծածկախոսություններ, հասարակաբանություններ, գոեհկաբանություններ, ժարգոնային ԴԱ-ներ), որոնց հոմանշությունը դրսևորվում է և՛ նույն, և՛ տարբեր շերտերի ու ենթաշերտերի միջև:

Ըստ գործառնության ոլորտի՝ ԴՄ-ները, այդ թվում հոմանշային հարաբերության մեջ գտնվողները, լինում են նաև բանավոր-խոսակցական (գրական-խոսակցական և ժողովրդախոսակցական) և գրավոր-գրքային (գիտական, վարչական, հրապարակախոսական, գեղարվեստական):

Հուլաբարտահայտչական երանգավորում ունեցող (հոմանիշ) ԴՄ-ները խմբավորվում են ըստ **դրական** (գարմանք, հիացմունք - գովասանք, օրինանք, կարեկցանք, մտերմություն, պատրաստականություն, խնդրանք-աղաչանք, հավանություն, փաղաքշանք) և **բացասական** (հեզմանք (երգիծանք) արհամարհանք, հանդիմանություն, զայրույթ, անեծք, նախատինք) վերաբերմունքի:

Իմաստային դարձվածային հոմանիշները տարբերվում են իմաստային նրբերանգներով: Հակառակ նրբերանգային իմաստներ են արտահայտվում շարքի ԴՄ-ների և բազմիմաստ ԴՄ-ների իմաստների միջև:

Ոճական դարձվածային հոմանիշները դասակարգվում են ըստ ա) դրական կամ բացասական վերաբերմունքի, բ) լեզվի պատմական տարբեր շերտերի և գ) լեզվի գործառնական տարբեր շերտերի պատկանելության:

Նույն խոսքաշարում խոսքային հոմանիշներ են դառնում նաև ԴՄ-ը և բառը:

Խոսքի պատկերավորման և արտահայտչական միջոցների շարքին պետք է ավելացնել նաև դարձվածային մակդիրը, որն արտահայտիչ ու ազդեցիկ խոսքի նախապայմաններից մեկն է:

Հոմանշային շարքեր են կազմում խոսքի պատկերավորման և արտահայտչական նույն և տարբեր միջոցները:

Ատենախոսության թեմայով հրատարակվել են՝

1. Հոմանշությունը և դարձվածաբանական հոմանշության կիրառությունը արդի հայերենում, «Լ àò àðèàèմ i àæóí àðí àí í é í àó-í í é èí í ó àðáí òèè, i í ñâyú àí í í é 75-èàð èþ í ñí í ààí èy ãí ñóààðñò àáí í í ãí àãðàðí í ãí óí èàãðñèò àò à Àðí àí èè», *Àðáááí, ǺǺǺ, 2006, ñò ð. 46-49.*
2. Դարձվածային հոմանիշները և նրանց կառուցվածքային տեսակները ժամանակակից հայերենում, «Ջահուկյանական ընթերցումներ» հանրապետական գիտական նստաշրջանի զեկուցումներ, «Ջանգակ-97» հրատ., Երևան, 2012, էջ 211-224:
3. Արևմտահայերեն դարձվածային միավորների բառարանային զուգադրական քննություն, «Կանթեղ» գիտական հոդվածների ժողովածու, «Ասողիկ» հրատ., Երևան, 2013, էջ 33-40:
4. Արևելահայերեն և արևմտահայերեն դարձվածային միավորները և նրանց հոմանշությունը, «Ջահուկյանական ընթերցումներ» հանրապետական գիտական նստաշրջանի զեկուցումներ, «Էդիթ Պրինտ» հրատ., Երևան, 2013, էջ 106-113:

Армине Арамаисовна Мкртумян
Фразеологические синонимы в современном армянском языке

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.02.01 «Армянский язык».

Защита состоится 30.06.2014 года, в 15:00 ч., на заседании специализированного совета по лингвистике 019 ВАК при институте языка им. Гр.Ачаряна Национальной Академии наук РА по адресу: 0015, Ереван, ул. Гр.Лусаворича 15.

РЕЗЮМЕ

Синонимия и фразеология служат проявлением богатства языка, делающим речь более выразительной, красивой и образной. Армянский язык богат фразеологическими синонимами, отражающими различные смысловые оттенки названий предметов и явлений.

Выбор темы диссертационного исследования обусловлен недостаточной изученностью фразеологических синонимов армянского языка. До сих пор подробно рассматривались многочисленные проблемы, связанные с фразеологией и синонимией, однако в целом в современном армянском языкознании фразеологическая синонимия изучена недостаточно.

В диссертации подробно исследованы фразеологические синонимы современного армянского языка по структурным видам, по общим компонентам фразеологических единиц, по историческим периодам развития языка, по двум литературным вариантам ашхарабара, стилистическому употреблению. Кроме того, в работе представлены 28 фразеологических неологизмов восточноармянского и 12 неологизмов западноармянского языка.

Диссертация состоит из введения, трех глав, заключения, списка сокращений и списка использованной литературы (общий объём работы - 147 страниц).

Во **Введении** рассматриваются вопросы толкования термина *фразеологические единицы (ФЕ)*, место фразеологии в языкознании, представлены точки зрения сторонников различных подходов (узого и широкого) к пониманию ФЕ, а также определение ФЕ.

ФЕ – устойчивые сочетания, имеющие метафорически-иносказательное значение, представляющие собой неразделимые, единые по смыслу словосочетания или предложения (в том числе переосмысленные глаголы аналитической структуры, крылатые слова, выражения клятвы, проклятия, порицания, пословицы, авторские неологизмы, благословения, пожелания, перифразы). В отличие от свободных словосочетаний, ФЕ существуют в языке в готовом виде, они не продуцируются в процессе речи, а воспроизводятся в качестве готовых смысловых единиц речи, обладающих лексическим значением, компонентной структурой и грамматическими категориями.

В **первой главе** приведено определение фразеологических синонимов в современном армянском языке, исследованы структурные типы синонимичных ФЕ, другие лексико-морфологические группы ФЕ (фразеологические омонимы, антонимы, паронимы), а также специфика общекомпонентных ФЕ и их синонимии.

В современном армянском языке синонимичными называются ФЕ, имеющие одинаковое или близкое значение, которые отличаются стилистическим употреблением и эмоционально-выразительными оттенками и в некоторых контекстах могут заменять друг друга.

ФЕ могут составлять синонимические ряды, если имеют структурное сходство. Слово, синонимичное синонимическому ряду ФЕ, также может иметь свои синонимы. Многозначные ФЕ могут входить в различные синонимические ряды.

Синонимические ряды общекомпонентных ФЕ (соматических, цветовых, зоонимов) многочисленны. Это обстоятельство объясняется, во-первых, количеством ФЕ, содержащих общий компонент; во-вторых, многозначностью ФЕ; в-третьих, словами, с которыми сочетаются ФЕ.

Во **второй главе** ФЕ исследованы по историческим периодам развития языка, по двум вариантам ашхарабара – восточноармянскому и западноармянскому; проведен лексикографический сравнительный анализ ФЕ западноармянского (частично и восточноармянского) языка.

В соответствии с историческим развитием языка и традиционной классификацией словарного состава языка принято выделять *лексику грабара, среднеармянскую, диалектную (территориальную), западноармянскую и восточноармянскую лексику*. Значительное место в лексическом составе языка занимают ФЕ.

Некоторые ФЕ грабара в точности перешли в ашхарабар. Это немногочисленные застывшие формы, занимающие в современном армянском языке особое место.

На основе обобщения имеющихся в научной литературе точек зрения на диалектную лексику и с учетом того, что в языкознании отсутствует подобная классификация ФЕ, диалектные ФЕ в диссертационной работе разделены на две группы: общедиалектные и узкодиалектные.

ФЕ западноармянского и восточноармянского языка редко входят в синонимичные отношения. Чаще они составляют фразеологические варианты, компоненты которых различаются лексико-грамматическими формами, свойственными каждому из этих вариантов литературного языка.

Сравнительное изучение «Фразеологического словаря армянского языка» А. Сукиасяна и С. Галстяна, «Толково-орфоэпического словаря западноармянского и восточноармянского языков» Р. Сакапетояна, «Подробного толкового фразеологического словаря армянского языка» П. Бедиряна выявило, что ФЕ западноармянского (а также восточноармянского) языка имеют многочисленные различия в орфографических, грамматических, синонимичных и вариативных формах, а также различия в числе и порядке компонентов.

В **третьей главе** приводится классификация ФЕ. Принятая в научной литературе стилистическая классификация лексики применена к ФЕ. В соответствии с этим классификация стилистической синонимии ФЕ осуществлена по следующим признакам: по сфере применения, по сфере функционирования, по эмоционально-выразительным оттенкам. Исследована фразеологическая синонимия образных и выразительных средств (дифференцированы также эпитеты); изучены семантические, стилистические, семантико-стилистические, а также языковые и речевые фразеологические синонимы.

С точки зрения стилистики очень важно правильное и уместное употребление ФЕ. Богатые синонимичные ряды ФЕ предоставляют большие возможности для этого.

В **Заключении** приведены общие выводы и результаты исследования. Приведены также списки сокращений и использованной литературы.

Armine Aramais Mkrtumyan
The Phraseological Synonyms in Modern Armenian
Dissertations Candidate's degree in Philological Sciences on the Specialization
10.02.01 – The Armenian Language

The defense will be held at the Address: 0015, Yerevan, Grigor Lusavorich Street 15, Institute of Language after H. Acharyan of the National Academy of Sciences, at the session on Specialized Council on Linguistics 019 HAC, at 15:00, 30.06.2014.

Summary

Synonymy and phraseology is the richness of the language due to which the speech becomes more expressive and figurative. The Armenian language is rich in phraseological synonyms which express different stylistic meanings of objects and phenomena.

The choice of the thesis is decided due to the fact that the phraseological synonyms in the Armenian language are less investigated. Various problems in Modern Armenian Linguistics concerning synonymy and phraseology have been investigated well but what about phraseological synonyms they haven't been studied completely yet.

In our thesis we have made a comprehensive study of phraseological synonyms in Modern Armenian based on their structural types, identical components, historical periods, the literary variants of Modern Armenian, the stylistic usages, as well as, we have introduced 28 phraseological neologisms in Eastern Armenian and 12 in Western Armenian.

The thesis consists of an Introduction, three Chapters, a Conclusion, a Bibliography and an Appendix (generally 147 pages).

The introduction stresses the place of phraseology in Modern Linguistics and also are introduced the divergences of opinions of Phraseological Units /PU/ in the professional literature with their different comprehensions and also is given the definition of the PU/wide and narrow/.

The PU-s are the totality of set expressions existing in the language with metaphorical and allegorical meanings which are inseparable word combinations or sentences with their proper meanings/including re-interpreted juxtapositional verbs, proverbs ,damns, oaths, reproaches, blessings, wishing, sayings and other expressions/.

In contrast to the free expressions the PU-s exist in the language as ready-made expressions. They are not formed during the communication but are reproduced as ready speech units which have their special word meanings, components and grammatical categories.

The definition of phraseological synonyms in Modern Armenian is given **in the first Chapter**, where we have studied also the PU-s and the types of their synonymic structures, other groups of the form and meaning /homonym, antonym, synonym /and identical /having the same or common component/ PU-s and their synonymic peculiarity.

In Modern Armenian are synonyms the PU-s which have the same or close meanings but they can be different in their stylistic usages and emotive coloration, in some context they can be replaced by one another. The PU-s can form synonymic series if they have structural generality.

The synonym word to the phraseological synonymic series can also have its synonym.

The same polysemantic PU-s can form different synonymic series.

The identical/ having the same or common meanings/ PU-s /somatic, with the names of color, names of animals /synonymic series are a lot. This circumstance has been defined due to a) the PU-s number formed with the same component, b) due to the polysemy of the PU-s, c) due to the similarity of the word and PU.

In the Second Chapter we have studied the PU-s and their synonymy according to the development of the historical streaks, the two dialects of Modern Armenian -Eastern and Western and we have done the lexicological parallel examination of PU-s in Western Armenian/partially in Eastern Armenian/.

According to the historical development of the language and the differentiated classification of the word stock are adopted the following word-layers *Old Armenian, Middle Armenian, dialectical, Western Armenian and Eastern Armenian*.

The PU-s have their role and place in these word-layers.

Some Old Armenian PH-s have exactly transformed into Modern Armenian.

They are not many set expressions which have their place in the phraseological synonymic series of Modern Armenian.

Summarizing the mentioned opinions in professional literature about the dialectical word stock and taking into consideration the fact that in linguistics there is not such identical classification for the PU-s, we have divided the stock of the PU-s into two parts *general dialectical* and *particular dialectical*.

The PU-s not often affirm synonymic relation in the fond of Eastern and Western Armenian. More often they form phraseological variations which components are different from the two variants of the literary language with their unique lexico-grammatical forms.

Due to the parallel examination of <<Phraseological Dictionary of the Armenian Language>> by R. Saqapetoyan and S. Galstyan, <<Orthoepic –explanatory Dictionary of Eastern and Western Armenian>> by R. Saqapetoyan and <<Wide Explanatory Dictionary of Armenian Phrases>> by P. Bediryan has been found out that in Western Armenian /as well as in Eastern Armenian/ PU-s have differences in their written, grammatical, synonymic, variantal, in a case of adding any component/or the contrary/ and the arraignment of the words.

In the Third Chapter the stylistic classification of the words done in the professional literature, we have defined concretely for the PU-s. In accordance, the stylistic synonymical classification of the PU-s is done due to the functional field, emotive coloration, we have done the examination of the means of expressiveness in the PU-s, /we have differentiated also the epithet/ semantic-stylistic as well as linguistic and speech phraseological synonyms. It is very important for Stylistics the proper and correct usage of PU-s .Their rich synonymic series give a great opportunity of choice.

In the Conclusion we have made general deductions about the research work.

We have introduced a list of abbreviations and the used literature/Bibliography/ at the end.